ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան « 09» հոկտեմբերի 2023թ № 1932-Ա

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 10-րդ կետի 2-րդ և 18-րդ կետի 21-րդ ենթակետերով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել Ձեռներեցության զարգացման ռազմավարության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգային մոտեցումները՝ համաձայն հավելվածի:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

X

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի
հոկտեմբերի 9-ի N 1932-Ա հրամանի

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԲԱՆ 2
II. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 3
III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ 5
IV. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7
Թվային գործիքների կիրառման վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրավագիտակցության բարձրացում 7
Թվային գործիքների կիրառման խրախուսում 8
ՓՄՁ անձնակազմի ուսուցում և կարողությունների զարգացում 8

I. ՆԱԽԱԲԱՆ

1. Համաշխարհային տեխնոլոգիական հեղափոխության համատեքստում տնտեսություններն անցնում են կատարում չորրորդ արդյունաբերական հեղափոխության նոր շրջափուլ, որի հիմնական առանձնահատկությունը նորագույն տեխնոլոգիաների, արհեստական բանականության, մեքենայական ուսուցման և համանման այլ գործիքների լայն կիրառությունն է տնտեսական գործընթացներում:

2. Այս մարտահրավերներին համընթաց կարևոր է կառավարությունների, գործարար շրջանակների և հասարակությունների կողմից համարժեք արձագանքը:

3. Փոփոխվում է ոչ միայն արդյունաբերության և տարբեր ոլորտների շուկաների կառուցվածքն, այլև մարդկային կապիտալին ներկայացվող պահանջները, առաջանում են մրցակցային նոր տիպի հարաբերություններ, նոր սուբյեկտներ: Թվային փոխակերպումները կարող են տեղի ունենալ ինչպես իներցիոն, համաշխարհային զարգացումներին ինտեգրվելու գործընթացում, այնպես էլ պլանավորված՝ պետական քաղաքականության արդյունքում:

4. Ազատ շուկայական տնտեսության պայմաններում թվային գործիքների կիրառումը բիզնես գործընթացներում աստիճանաբար ավելի մեծ տարածում է գտնում: Այնուամենայնիվ, կառավարությունների խնդիրներից է հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) թվային փոխակերպմանն աջակցությունը:

5. Աշխարհի շատ երկրներ մշակել են նմանատիպ քաղաքականություններ: Ակնհայտ է, որ թվային գործիքներն արագ մուտք են գործում կառավարությունների, հասարակությունների և բիզնեսի առօրյա գործընթացներ՝ ապահովելով կառավարման, հաղորդակցման, մրցակցության նոր միջավայր:

6. Թվային փոխակերպումը տարբերվում է ավտոմատացումից. այն պահանջում է բիզնես գործընթացների, բիզնեսի մոդելների և ձեռնարկության ներսում ու դրա շուրջ տնտեսական հարաբերությունների համակարգային փոփոխություններ:

7. Հայաստանի Հանրապետության տնտեսությունն անմասն չի թվային փոխակերպման գործընթացներից: Հայաստանի Հանրապետության կառավարությունը

2021-2026 թվականների իր հնգամյա ծրագրով[1] «Տնտեսության» բաժնում ամրագրել է միջոցառումներ՝ ուղղված «տնտեսության թվայնացման և տեղեկատվության հասանելիության մակարդակի բարձրացմանը, թիրախավորելով տնտեսավարողների թվային կարողությունների զարգացումը, թվային տնտեսության համար առանցքային ենթակառուցվածքների հասանելիության և որակի բարձրացումը, ինչպես նաև ապահովելով տեղեկատվության հասանելիությանն առնչվող կարգավորումների ճկունությունը»:

8. Այնուամենայնիվ, չնայած թվային տնտեսության կողմից ներկայացված հսկայական հնարավորություններին, տարածաշրջանում դեռ ամբողջությամբ չի իրացվել կայուն զարգացման համար թվային գործիքներն օգտագործելու ներուժը՝ թվային հմտությունների անբավարար զարգացման և սոցիալ-տնտեսական խոչընդոտների պատճառով:

9. Հայաստանի Հանրապետությունում թվային փոխակերպման գործընթացը ՓՄՁ ոլորտում սահուն իրականացնելու նպատակով կարևորվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից թվային գործիքների կիրառման խրախուսումն ու խթանումը, ուսուցումն ու իրազեկումը:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Տնտեսության մեջ թվային գործիքների կիրառման գործընթացի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության ՓՄՁ թվային հասունության և արտադրողականության մակարդակների բարձրացմանը, ներդնել թվային գործիքների խթանման և խրախուսման մեխանիզմներ:

11. Միջազգային պրակտիկայում տնտեսության թվայնացման մակարդակի գնահատման նպատակով ներդրված են տարբեր ինդեքսներ, տարբերվող մեթոդաբանությամբ՝ հիմնված երկրի տնտեսական զարգացման մակարդակի և այլ չափանիշների վրա:

---

[1] https://www.gov.am/files/docs/4586.pdf

12. Թվային տնտեսության և հասարակության ինդեքսը (Digital Economy and Society Index (DESI)) ներկայացնում է Եվրոպական միության երկրների թվային մրցունակության դինամիկան: Այն ներառում է գնահատման հինգ ուղղություն՝ ֆիքսված և շարժական լայնաշերտ կապն ու դրա որակը, թվային հմտություններ ունեցող մարդկային կապիտալը, ինտերնետային ծառայությունների օգտագործման շրջանակը, բիզնեսների և էլեկտրոնային առևտրի թվայնացումը, թվային հանրային ծառայությունները: Նշված ինդեքսի կիրառությունն ընդլայնելու և Եվրամիության համար ստացված պատկերը միջազգային համեմատականների (Եվրամիության անդամ չհանդիսացող 17 երկրների հետ) համատեքստում դիտարկելու նպատակով 2016 թվականից գործածվում է Թվային տնտեսության և հասարակության միջազգային ինդեքսը (International Digital Economy and Society Index (I-DESI))[2]:

13. Մեկ այլ ցուցիչ է մշակվել Համաշխարհային բանկի կողմից Թվային ներդրման ինդեքսը (Digital Adoption Index (DAI))[3], որը չափում է 171 երկրներում թվային տեխնոլոգիաների ներդրման խորությունը և շրջանակը: Այս ցուցանիշը գնահատվում է երեք հիմնական ուղղություններով՝ թվայնացման մակարդակը տնտեսությունում, հասարակության շրջանում և կառավարության մակարդակում: Բիզնեսի կլաստերը պարզ միջին թվաբանականն է չորս նորմալիզացված ցուցիչների՝ կայքէջ ունեցող բիզնեսների տոկոսը, անվտանգ սերվերների քանակը, ներբեռնման արագությունը և 3G ծածկույթը տվյալ երկրում:

14. Ընդհանուր առմամբ, թվային հասունությունը ձեռնարկության մակարդակում ՓՄՁ կարողությունն է արդյունավետ օգտագործել թվային գործիքները և տեխնոլոգիաները: Թվային գործիքների կիրառումը, ներառյալ կազմակերպության տեխնոլոգիական ենթակառուցվածքը, թվային ռազմավարությունը, առաջնորդությունը, մշակույթը և աշխատուժի հմտությունները:

---

[2] Digital Economy and Society Index 2020: Thematic chapters, European Commission, 2020, pages 10-11.

[3] Digital Adoption Index (DAI): Measuring the Global Spread of Digital Technologies, Background note on World Development Report 2016: Digital Dividends, WDR 2016 Team, World Bank Group, // URL: http://pubdocs.worldbank.org/en/587221475074960682/WDR16- BP-DAI-methodology.pdf, 30.10.2020.

15. Թվային առումով հասուն է համարվում այն ձեռնարկությունը, որն ինտեգրել է թվային գործիքները և տեխնոլոգիաներն իր գործունեության բոլոր ոլորտներում, ներառյալ ներքին գործընթացները, հաճախորդների ներգրավվածությունը, ծառայությունների մատուցումը, պետական կառավարման մարմինների հետ հաղորդակցումը:

16. Թվային հասունությունը, որպես կանոն, ունենում է երեք աստիճան.

1) ցածր թվային հասունություն (Low digital maturity),
2) միջին թվային հասունություն (Medium digital maturity),
3) բարձր թվային հասունություն (High digital maturity):

17. Այս ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության ՓՄՁ թվայնացման ներկա մակարդակի բացահայտումը,
2) թվային գործիքների վերաբերյալ ՓՄՁ-ների գրագիտության և տեղեկացվածության մակարդակի գնահատումը,
3) թվայնացման գործում ՓՄՁ-ների կարիքների և առաջնահերթությունների սահմանումը, խնդիրների բացահայտումը,
4) թվային հասունության մակարդակի բացահայտումը:

III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

18. Տեղական տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի աճն ամրապնդում է տնտեսության հետագա թվայնացման համար անհրաժեշտ հիմքերը: Թվային տնտեսությունը սպասարկող ճյուղերը, ինչպիսիք են էլեկտրոնային վճարումների համակարգերը, փոստային ենթակառուցվածքները, թվային բանկային ծառայությունները և էլեկտրոնային առևտրին առնչվող ծառայությունները զարգանում

են, սակայն մրցունակության մակարդակով դեռևս զիջում են համաշխարհային և տարածաշրջանային համատեքստում:

19. Էլեկտրոնային առևտուրը զարգանում է, սակայն տարածվածությունը թե բիզնեսի, թե հասարակության շրջանում դեռևս ցածր է:

20. Ֆինանսական տեխնոլոգիաների շուկան նկատելի զարգացում է ապրում Հայաստանի Հանրապետությունում, որն ուղեկցվում է շուկայի մասնավոր մասնակիցների կողմից զգալի ներդրումներով և սեփական բարձր տեխնոլոգիաների արտադրանքների մշակմամբ:

21. Շուկայի ամենաարագ զարգացող հատվածներն են թվային բանկային ծառայությունները, թվային դրամապանակները, վարկավորման թվային հարթակները և այլն:

22. COVID-19 համավարակը արագացրել է թվային փոխակերպման անհրաժեշտությունը տնտեսության բոլոր ոլորտներում: Հայաստանի Հանրապետության կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպումն ապահովելու համար 2021 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել է Հայաստանի թվայնացման ռազմավարությունը, ռազմավարության միջոցառումների ծրագիրը և արդյունքային ցուցանիշները նպատակ ունենալով նպաստելու՝ պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը և հասանելիության բարձրացմանը, թվային հարթակների ու խելացի լուծումների միջոցով տնտեսության մասնավոր հատվածի արդիականացմանը և մրցունակության բարձրացմանը, թվային գործիքների վերաբերյալ հասարակության տեղեկացվածությանը և նոր՝ թվային կարողությունների զարգացմանը, թվային հմտություններին տիրապետող՝ ապագայի տնտեսությանը պատրաստ, աշխատուժի ձևավորմանը և թվային գործիքների լայն կիրառմանը հանրության կողմից:

23. Ներկայումս, վիճակագրության բացակայության պայմաններում դժվար է գնահատել Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ների կողմից թվային գործիքների կիրառման վերաբերյալ ներկա իրավիճակը: Որոշ գործընթացներ, որոնք կապված են

պետական կառավարման մարմինների կամ ֆինանսական համակարգի, մասնավորապես՝ բանկերի, ինչպես նաև արտաքին շուկաների, ինչպես օրինակ՝ էլեկտրոնային առևտրի հետ, ՓՄՁ սուբյեկտների կողմից իրականացվում են օրենսդրական պայմանից կամ շուկայի մրցակցային պահանջարկից ելնելով:

24. Սակայն համակարգային բարեփոխումների համար պետական աջակցության, խրախուսման և խթանման մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն կա:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. ՓՄՁ թվային էկոհամակարգի զարգացումը կնպաստի բիզնեսի արտադրողականության և մրցունակության բարձրացմանը: Ձեռնարկությունների թվային փոխակերպման արդյունքում, հիմնարար նախադրյալներ կստեղծվեն մի շարք այլ ոլորտների կարողությունների արագ զարգացման, արդիականացման, արտադրված հայկական ապրանքների ու մատուցվող ծառայությունների մրցունակության բարձրացման, դրանց արտահանման աճի խթանման, և տնտեսական աճին նպաստող կարողությունների զարգացման համար:

26. Որպես պետական աջակցության հիմնական ուղղություններ դիտարկվում են՝

1) թվային գործիքների կիրառման վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրավագիտակցության բարձրացումը,
2) թվային գործիքների կիրառման խրախուսում,
3) ՓՄՁ անձնակազմի ուսուցում և կարողությունների զարգացում:

Թվային գործիքների կիրառման վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրավագիտակցության բարձրացում

27. Թվային էկոհամակարգում թվային գործիքների կիրառման վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրավագիտակցության բարձրացումը, կարողությունների զարգացումը, թվային փոխակերպման միջոցով ՓՄՁ-ների և խոշոր ձեռնարկությունների արտադրողականության և մրցունակության բարձրացումը կարևորագույն խնդիր է:

Որպես միջոցառման արդյունք անհրաժեշտ է առանձնացնել ձեռնարկությունների մոտ նորարար և թվային մտածելակերպի ձևավորումը:

28. Հայաստանի Հանրապետության ՓՄՁ սուբյեկտների կողմից նորարարական լուծումների, մտածողության և թվային գործիքների ներդրման շրջանակում կիրականացվի միջոցառումների արշավ մասնավոր ոլորտում իրազեկվածության բարձրացման նպատակով: Խրախուսելու, մոտիվացնելու, լավագույն փորձն ու հմտությունները գործընթացի մասնակիցներին փոխանցելու նպատակով միջոցառումներին կհրավիրվեն տեխնոլոգիական ոլորտի առաջատար մասնագետներ, հաջողակ ձեռներեցներ, մենթորներ և այլն:

Թվային գործիքների կիրառման խրախուսում

29. Կմշակվեն խրախուսման ծրագրեր խթանելու թվային գործիքների ներդրումը և կիրառումը ՓՄՁ ոլորտում: Դրանք կարող են լինել ինչպես միջոցառումների, խորհրդատվական ծրագրերի, այնպես էլ հարթակների կամ տեխնոլոգիաների ստեղծմանն աջակցության տեսքով, որոնց օգտագործումն ակնհայտորեն կնպաստի բիզնեսի զարգացմանը: Ձեռնարկությունների կողմից թվային գործիքների կիառումը բիզնես գործընթացները պարզեցնելու նպատակով հիմնարար նախադրյալներ կստեղծի մի շարք այլ ոլորտների կարողությունների արագ զարգացման, արդիականացման, արտադրված հայկական ապրանքների ու մատուցվող ծառայությունների մրցունակության բարձրացման, դրանց արտահանման աճի խթանման, և տնտեսական աճին նպաստող կարողությունների զարգացման համար:

ՓՄՁ անձնակազմի ուսուցում և կարողությունների զարգացում

30. Թվային էկոհամակարգի կարողությունների զարգացման ծրագրի նպատակն է խթանել մասնավոր ոլորտի զարգացումը մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների ավելացման միջոցով:

31. ՓՄՁ-ները թվային տնտեսության զարգացումներին հնարավորինս արագ ինտեգրելու նպատակով կիրականացվեն թվային կարողությունների զարգացմանն ուղղված կրթական ծրագրեր՝ արդյունքում նպաստելով նոր՝ թվային կարողություններով օժտմանը: